



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ

«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2012



**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**





Հայաստանն այսօր երկրի ժողովրդավարական և սոցիալ-տնտեսական զարգացման նշանակալի գործընթացների շեմին է: 2012-2013 թթ. կայանալիք խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն արդիական են դարձնում կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը թե՛ նրանց պատասխանատվության, թե՛ մեր երկրի համար կարևոր քաղաքական գործընթացների վրա ազդեցության ուժեղացման տեսանկյունից:

Օրենսդիր և գործադիր իշխանության մեջ անհրաժեշտ գիտելիքներ և քաղաքական աշխատանքի փորձ ունեցող բավարար թվով ներկայացված կանայք միայն կարող են նպաստել որոշումների կայացման մշակույթի փոփոխմանը և ազդել այդ որոշումների բովանդակության ու որակի վրա:

«Կանանց քաղաքական օրակարգում» ընդգրկվում են այն հիմնախնդիրները, որոնց լուծումը հասարակությունը կապում է իշխանության մեջ կանանց և տղամարդկանց հաշվեկշռված ներկայացվածության հետ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ հասարակության և կանանց ակնկալիքները կապված են խաղաղության, կայունության և սոցիալական բարեկեցության ապահովման հետ: Դա պայմանավորված է նրանով, որ կանայք, մի կողմից, ավելի հակված են երկխոսության ու փոխզիջման և ունակ են խաղաղություն ու կայունություն ապահովելու հասարակությունում: Մյուս կողմից՝ ընթացիկ, առօրյա կյանքի խնդիրները, սոցիալական հարցերն ավելի մոտ են կանանց: Երկրում տիրող ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում նման մոտեցումն ավելի քան պահանջված է հայ հասարակության կողմից:

Ընտրությունները հասարակության ժողովրդավարացման գործընթացի կարևորագույն մասն են: Ընտրություններին քաղաքացիների մասնակցությունից է կախված հասարակության հետագա զարգացումը:

Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունների գործընթացների տեսանկյունից «Կանանց քաղաքական օրակարգի» ձևավորման խնդիրը դառնում է առանձնապես արդիական ու նշանակալի:

Օրինաչափ է, որ «Կանանց քաղաքական օրակարգը» ձևավորելու և քաղաքական կուսակցություններին ներկայացնելու տեսանկյունից առավելագույն ակնկալիքները կապվում են կանանց հասարակական կազմակերպությունների հետ:



Մենք՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի լիդերներս, գիտակցելով մեր պատասխանատվությունը երկրում կատարվող գործընթացների համար և կյանքը դեպի լավը փոխելու ուժ տեսնելով մեր մեջ, հասարակությանը հուզող հիմնախնդիրները լուծելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների շեմին ձևավորել ենք «Կանանց քաղաքական օրակարգը»՝ ներառելով ազգային անվտանգության, սոցիալական արդարության և երկրի բարօրության հարցերը և ներկայացնում ենք քաղաքական կուսակցություններին, պատգամավորության թեկնածուներին՝ տղամարդկանց և կանանց:

Ներկայացվող հարցերի լուծումն ակնկալում ենք բոլոր քաղաքական կուսակցություններից:

Մենք կոչ ենք անում քաղաքական կուսակցություններին և մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուներին քննարկել «Կանանց քաղաքական օրակարգը» և աջակցել բարձրացված խնդիրների լուծմանը:

Մենք համոզված ենք, որ «Կանանց քաղաքական օրակարգը» հնարավորություն կտա լսելի դարձնելու կանանց ձայնը, և շատ հարցեր լուծում կատանան:

**«Կանանց քաղաքական օրակարգը»
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի 2012 թվականի ընտրություններում:**

2012 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրությունների նախօրեին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի մասնաճյուղերը Երևանում և մարզերում անցկացրեցին «ՀՀ խորհրդարանական ընտրությունների «Կանանց քաղաքական օրակարգը» թեմայով կլոր սեղան-քննարկումներ, որոնք դուրս էին գրուտ կանանց խնդիրների շրջանակներից և ընդգրկում էին ամբողջ հասարակությանը հուզող բազում հիմնահարցեր՝ կապված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, ժողովրդագրական օրեցօր վատթարացող իրավիճակի, կրթության համակարգի ոչ արդյունավետ բարեփոխման և ժողովրդավարության տեղապտույտի հետ:



Ներկայացնելով քաղաքական կուսակցություններին և մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուներին կլոր սեղան-քննարկումների ժամանակ առավել հաճախ բարձրացված հարցերը՝ ակնկալում ենք Ձեր պատասխանները. հանգամանք, որը հնարավորություն կտա կանանց կողմնորոշվելու ընտրությունների ընթացքում:

1. Հայտնի է, որ հանրապետությունում շարունակում է աճել աղքատության ցուցանիշը՝ 2008-ին արձանագրված 27.9%-ից հասնելով 35.8%-ի: 2010 թ. բնակչության ավելի քան մեկ երրորդը՝ 35.8%-ը, եղել է աղքատ, նրանցից մոտ ամեն հինգերորդը (21.3%) շատ աղքատ է, իսկ 3.0%-ը՝ ծայրահեղ աղքատ: Ընդ որում, աղքատ բնակչության 54.5%-ը կանայք են:

Ինչպիսի՞ն է Ձեր կուսակցության քաղաքականությունը աղքատության ցուցանիշը նվազեցնելու ուղղությամբ:

2. Հանրապետությունում ամենասուր սոցիալ-տնտեսական խնդիրներից մեկը շարունակում է մնալ գործազրկությունը: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում կանայք կազմում են 70%, իսկ առավել ակտիվ աշխատունակ տարիքային խմբում՝ 30-39 տարեկան կանանց շրջանում, գրանցված գործազրկության մակարդակը կազմում է ավելի քան 60%: Կանանց տնտեսական ակտիվությունը բոլոր տարիքային խմբերում տղամարդկանց համեմատ մնում է զգալիորեն ցածր մակարդակում. տնտեսապես ակտիվ կանայք 48,8% են կազմում, իսկ տղամարդիկ՝ 75,9%: Կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի մոտ 60%-ը: Հայաստանի տնտեսական աճի տեմպերը հիմնականում ապահովվում են շինարարության հաշվին: Իսկ արդյունաբերության այն ճյուղերը, որտեղ ավանդաբար ընդգրկված էին կանայք, չեն վերականգնվում:

Եթե Ձեր կուսակցությունն ընտրություններում հաղթելու արդյունքում իշխանության գա, ի՞նչ ծրագրեր ունեք՝ ուղղված արտադրության այնպիսի ճյուղերի վերականգնմանը, ինչպիսիք են թեթև արդյունաբերությունը, ճշգրիտ սարքաշինությունը և ռադիոէլեկտրոնիկան:

3. Վերջին շրջանում հաճախակի են խոսակցությունները փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վերաբերյալ: Այդ մասին խոսում են և՛ կուալիցիալի, և՛ ընդդիմության կուսակցությունները:



Կանանց և տղամարդկանց գործարար հնարավորությունների ընդլայնման արգելակ են երկրում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման անբավարար մակարդակը, ֆինանսավորման, վարկավորման և ներդրումների աջակցության մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև ձեռնարկատիրության ցածր մատչելիությունը, խթանող պայմանների բացակայությունը, հարկային և ընդհանուր իրավական դաշտի անկատարությունը: Առկա ֆինանսավորման աղբյուրները հիմնականում հասանելի չեն փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտներին, հատկապես՝ սակավ ֆինանսական հնարավորություններ ունեցողներին, որոնց մեծ մասը կանայք են, ինչը բացատրվում է՝

- գործարար վարկերի բարձր տոկոսադրույքներով (15-24%՝ առանց սպասարկման համար գանձվող տարատեսակ վճարների, որոնք նույնպես բարձրացնում են վարկի ընդհանուր արժեքը),
- միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությամբ (լավագույն դեպքում վարկերը տրամադրվում են մինչև 18 ամսով),
- տրամադրվող վարկերի փոքր գումարներով (200-5000 ԱՄՆ դոլարի սահմաններում),
- վարկային երաշխիքների համակարգի անկատարությամբ,
- վարկերի դիմաց գրավադրման պայմանների ոչ համարժեքությամբ,
- բիզնես ծրագրերի անբավարար հիմնավորվածությամբ՝ պայմանավորված խորհրդատվական ծառայությունների բացակայությամբ:

Ի՞նչ գործնական քայլեր եք նախատեսում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը խթանելու ուղղությամբ:

4. Հայտնի է, որ բնակչության նվազումը հիմնականում պայմանավորված է երկու գործոնով՝ հարածուն արտագաղթով և ծնելիության անկմամբ: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ հանրապետությունում ծնելիության գործակիցն այսօր զգալիորեն ցածր է բնակչության բնական վերարտադրությունն ապահովելու համար՝ 1,5, այսինքն՝ յուրաքանչյուր կին ունենում է ընդամենը 1-2 երեխա, մինչդեռ բնակչության բնական վերարտադրության համար այդ գործակիցը պետք է լինի առնվազն 2,1, իսկ աճի համար՝ 2,2-ից բարձր, այլ կերպ ասած՝ 3-4 երեխա յուրաքանչյուր ընտանիքում:

Ծնելիության անկման պատճառները սոցիալ-տնտեսական պայմաններն են, երեխաների համար արժանավայել կյանք ապահովելու անկարողության վախը,



պետության խրախուսող քաղաքականության անարդյունավետությունը: Հանրապետությունում տղամարդկանց աշխատանքային միգրացիայի հետևանքով աղետալի չափերի է հասել «հեռահար» ընտանիքների թիվը, որը փաստորեն հանգեցրել է ավանդական ընտանիքի քայքայման և ծնելիության անկման:

Երեք և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների խմբում աղքատության ռիսկի ենթակա է 60%-ը, իսկ բնակչության ընդհանուր թվում՝ 35.8%-ը: Հանրապետությունում աճում է այն տնային տնտեսությունների թիվը, որոնք ղեկավարում են կանայք: Կին գլխավորով տնային տնտեսությունները, որոնց մասնաբաժինը կազմում է 30.7%, ավելի աղքատ են, քան տղամարդ գլխավորով տնային տնտեսությունները: 2009 թ. ամսական աշխատավարձի միջին չափը՝ մեկ շնչի հաշվով, տղամարդ գլխավորով ընտանիքներում կազմել է 22614 դրամ, կին գլխավորով ընտանիքներում՝ 9211 դրամ:

Ի՞նչ եք նախատեսել Ձեր կուսակցության ռազմավարության մեջ երկրի ժողովրդագրական իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

5. Վերջին տարիներին հանրակրթության ոլորտը մանկավարժների ցածր աշխատավարձի պատճառով լիովին իգականացվել է, ինչը բացասաբար է անդրադառնում անհատի, մասնավորապես տղաների ձևավորման և բանակում ծառայելուն պատրաստվածության վրա: Արդի պահանջները բավարարող ուսումնական ծրագրերի և ձեռնարկների բացակայությունը, դասավանդման ցածր մակարդակը հանգեցրել են բարձրագույն դպրոցում ուսումը շարունակելու համար կրկնուսույցների լայն համակարգի ձևավորմանը: Միջնակարգ հանրակրթության համակարգում լուրջ ուշադրություն չի դարձվում աշակերտների մեջ քաղաքացիության բարձր որակների և երկրի առջև պատասխանատվության ձևավորմանը:

Կրթության համակարգի ներկայիս վերակառուցումը կհանգեցնի նրան, որ հանրապետության մարզերում երեխաների զգալի մասը, այդ թվում և տաղանդավոր, գյուղերի մի մասում ավագ դպրոցի բացակայության պատճառով կզրկվի լիակատար միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունից: Չե՞ք կարծում, որ ավագ դպրոցների անցման և միջնակարգ դպրոցների կրճատման հետևանքով խախտվում է քաղաքացու լրիվ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը, բացի այդ, նման ձևով վերակառուցումը, որը հիմնված չէ գիտական



հետազոտությունների և ակնկալվող արդյունքների հաշվարկների վրա, կամայականություն է և հանգեցնում է երկրի մտավոր ներուժի նվազման, երկրի տաղանդների մի մասի կորստյան և, վերջին հաշվով, խոչընդոտ կդառնա Հայաստանի առաջընթաց զարգացման ճանապարհին:

Համաձայն էք, որ հանրակրթության համակարգը լուրջ, բայց միանգամայն այլ սկզբունքներով վերակառուցման կարիք ունի: Ի՞նչ քայլեր կձեռնարկի Չեր կուսակցությունը, որպեսզի կանխի հանրակրթության՝ ազգային շահերին չհամապատասխանող վերակառուցումը:

6. Թեև Հայաստանը բնակչության կրթվածության առումով բավական բարձր ցուցանիշներ ունի, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների կեսից ավելին կանայք են, այսուհանդերձ, քաղաքական որոշումների կայացման մակարդակում, տեղական ինքնակառավարման, տարածքային և պետական կառավարման կենտրոնական օղակներում, ձեռնարկատիրության ոլորտում, տնտեսական կառավարման մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը հավասարակշռված չէ:

Կանանց ներուժը լիարժեք չի իրացվում հանրային կառավարման, որոշումների ընդունման, տնտեսական, հասարակական-քաղաքական կառավարման ասպարեզներում: Կանանց ցածր ներկայացվածությունը որոշումների ընդունման մակարդակում հակասում է ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքներին և բացասաբար է ազդում ընդունվող որոշումների որակի վրա:

Հաշվի առնելով, որ կանայք կազմում են ՀՀ բնակչության 52%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների՝ 58%-ը, ստեղծված իրավիճակը կարելի է որակել որպես հանրապետությունում մարդկային ռեսուրսների անարդյունավետ օգտագործում:

Հազարամյակի զարգացման նպատակների կատարման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է «մինչև 2015 թվականը ապահովել ՀՀ օրենսդիր մարմնի կազմում կին պատգամավորների առնվազն 25%-ի մասնաբաժին, իսկ համայնքների ղեկավարի պաշտոնում՝ կանանց ընդգրկվածությունը հասցնել 10%-ի»:



2007 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում Ազգային ժողով մտավ ընդամենը 12 կին պատգամավոր կամ պատգամավորների 9,2%-ը: Ընտրական օրենսգրքում կուսակցությունների համամասնական ցուցակների համար 20% գենդերային քվոտայի ներառումը կարող էր մի փոքր բարելավել իրավիճակը, սակայն նախընտրական ցուցակների վերլուծություններն առանձնապես լավատեսություն չեն ներշնչում:

Նախորդ ընտրությունները ցույց տվեցին, որ կանանց մի մասը, առանց հիմնավոր պատճառաբանության, հրաժարվեց պատգամավորական մանդատից: Իհարկե, այդ երևույթը նկատվում է նաև տղամարդկանց շրջանում, սակայն կանանց դեպքում հանգեցնում է նրան, որ կանանց ներկայացվածությունը ԱԺ-ում նվազում է: Կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը հավասարակշռված չէ գործադիր իշխանության քաղաքական և հայեցողական պաշտոններում. 18 նախարարների կազմում միայն երկուսն են կին, և 65 փոխնախարարների ընդամենը 6-ն են կին: Հանրապետությունում 31 մարզպետների և փոխմարզպետների թվում մեկն է կին: Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանայք կազմում են ընդամենը 11%:

Չափազանց դանդաղ է զարգանում տեղական ժողովրդավարությունը. քաղաքապետների թվում ոչ մի կին չկա, և 53 նշանակով փոխքաղաքապետներից միայն մեկն է կին: Կանայք գյուղական ավագանիների ընդամենը 6.2%-ն են կազմում, քաղաքային ավագանիների՝ 4.2%-ը, 866 գյուղապետներից ընդամենը 24-ն են կին: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի են ունենալու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Ինչպիսի՞ն է լինելու Ձեր կուսակցության քաղաքականությունը՝ ուղղված քաղաքական և հայեցողական պաշտոններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովմանը, ի՞նչ է ձեռնարկելու Ձեր կուսակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածությունը ավելացնելու համար:

«ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

մշակվել է

«Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական
նախաձեռնությունները. գենդերային հավասարության
հասնելու հեռանկարները Հայաստանում»
ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է
«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի»
օժանդակությամբ:

Համալսարանական կրթությամբ ասոցիացիա
0002, Երևան, Մարյան 22, 12-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 53 68 02
Ֆաքս՝ (374 10) 53 67 92
Էլ. փոստ՝ awue.armenia@gmail.com



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am